ուած ամենապատուաւոր տեղը: Ամենից առաջ Աւետարանի վրայ երդւում են 70 որոնողները, յետոյ 24 դատողները — «ըստ հայոց օրէնքի, աննախանձաբար եւ անկողմնակալ վասն մեղուցելոյն» վերաբերուելու գործին, որից յետոյ 70 որոնողներին, երկու դպիր-ատենապանների եւ ամբողջ գրաւոր նիւթի հետ միասին, մտցնում են մի սենեակ, փակում են այնտեղ, դրանը պահակ դնելով, որպէսզի ոչ ոք ելումուտ չանի նրանց մօտ: Այնտեղ նրանք վիճաբանում են այն մասին՝ արդեօք արդա՞ր թէ՞ յանցաւոր է դատապարտեալը կամ հեղինակի լեզուով ասած՝ «յստակ թէ աղտեղի»: Որը ձայների մեծամասնութիւն է ստանում, դըրւում է թղթի վրայ, ամէնքը ստորագրում են եւ դուրս գալով ատեան, նրանց նախագահը կարդում է որոշումը: Եթէ որոշումը «յստակ» է, դատապարտեալն անմիջապէս ազատւում է բանտից, առանց «ոչ մի խօսք յումեքէ». իսկ եթէ «աղտեղի», խսկոյն յանցաւորին բերում են ատեան, կարդում են բոլոր մեղադրանքը եւ վկաների ցուցմունքները, որից յետոյ դպիր-ատենապանը հարց ու փորձ է անում դատապարտեալին՝ գործի դրդապատճառների եւ բոլոր պարագաների մասին եւ 24 դատողները լսում են այդ բոլորը: Ապա ամբողջ գործը 24 դատողների հետ միասին փակում են մի սենեակում — ինչպէս վերեւում տեսանք — վճիռը տալու համար: Վճիռը գրուած եւ բոլորի կողմից ստորագրուած բերում եւ իրենց նախագահի ձեռքով ներկայացնում են «ի սպասս իշխանի եւ դատաւորաց» եւ դպիր-ատենապանը կարդում է բարձր ձայնով, որից յետոյ իշխանը ոտի է կանգնում եւ իր բերանով հրամայում է.—

Եթէ դատապարտեալը արդարացած է՝ «թոյլ տուք երթիցէ ի խաղաղութեամբ», եթէ մահապարտ է՝ «բարձէք ի միջոյ աղտն աշխարհի». կամ «հրացեալ երկաթին կիզեցէք ձեռն դորա», կամ «300 դամչի դան հարէք դմա», կամ «500 դահեկան երծաթ առէք ի դմանէ եւ տուք ի տունս աղքատաց», կամ «դամենայն աւուրս կենաց իւրոց կացցէ ի բանտի մինչեւ ի մահ իւր»: Որից յետոյ յանցագործը «կապանօք յանձնեսցի ի ձեռն զօրագլխի եւ դահճի», որպէսզի 15 օրը լրանալուց յետոյ՝ ի կատար ածուի վճիռը (շէ):

Ծայրագոյն եւ շրջանային դատարաններից զատ ուրիշ աւելի ցած դատական հիմնարկութիւններ արդեօք Հայաստանում գոյութիւն պիտի ունենա՞ն թէ ոչ — այս մասին լռում է հեղինակը:

ԼՈՒՅՑԱՏՏԻ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌ ՄԸ

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

I

ԼՈՒԻԶԻ ԼՈՒՅՑԱՏՏԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

Ուշ քան երբեք... Խղճի պարտք մը պիտի կատարեմ, որդիական երախտագիտութեան պարտք մը հանդէպ մեծ հանդուցեալի:

Լուիջի Լուցցատտի դուցէ վերջին շառաւիղն էր այն սխրագործ փաղանգի, որ մէկ դարէ ի վեր հալածական ազգերու ազատագրութեան փողը հնչեցուց Նիւթապաշտ Եւրոպայի ականջներուն եւ որու շղթան կը ձգուի Բայրընէն ու Շատոբրեանէն մինչեւ մեծն Գլադստըն, դատողների հետ միասին փակում են մի սենեակում — ինչպէս վերեւում տեսանք — վճիռը տալու համար: Վճիռը գրուած եւ բոլորի կողմից ստորագրուած բերում եւ իրենց նախագահի ձեռքով ներկայացնում են «ի սպասս իշխանի եւ դատաւորաց» եւ դպիր-ատենապանը կարդում է բարձր ձայնով, որից յետոյ իշխանը ոտի է կանգնում եւ իր բերանով հրամայում է.—

Եթէ դատապարտեալը արդարացած է՝ «թոյլ տուք երթիցէ ի խաղաղութեամբ», եթէ մահապարտ է՝ «բարձէք ի միջոյ աղտն աշխարհի». կամ «հրացեալ երկաթին կիզեցէք ձեռն դորա», կամ «300 դամչի դան հարէք դմա», կամ «500 դահեկան երծաթ առէք ի դմանէ եւ տուք ի տունս աղքատաց», կամ «դամենայն աւուրս կենաց իւրոց կացցէ ի բանտի մինչեւ ի մահ իւր»: Որից յետոյ յանցագործը «կապանօք յանձնեսցի ի ձեռն զօրագլխի եւ դահճի», որպէսզի 15 օրը լրանալուց յետոյ՝ ի կատար ածուի վճիռը (շէ):

Ծայրագոյն եւ շրջանային դատարաններից զատ ուրիշ աւելի ցած դատական հիմնարկութիւններ արդեօք Հայաստանում գոյութիւն պիտի ունենա՞ն թէ ոչ — այս մասին լռում է հեղինակը:

մինչեւ նորագոյն ժամանակներու «առաքեալները»:

Վերջին շառաւիղը՝ «սերուած» ուղղակի Գլադստընէն:

Օր մը կը պատմէր ինձի, թէ ինչպէս մեծ անգլիացիէն իբր աւանդ ընդունած է հայկական դատը:

«Վենետիկ էինք, կ'ըսէր (չեմ յիշեր ո՛ր տարուն, անշուշտ, իննսունական թուականներու մէջ, համիդեան սարսափներէն յետոյ. Մ. Վ.) — Գլադստըն պտոյտի եկած էր հոն եւ երկար զրոյցի ընթացքին ըսաւ ինձի՝